կեանքը շատ տխուր է և յուզիչ։ Նա իր ճակատի քրտինքի, իր հալալ աշխատանքի տէրը չէ։ Նա շատ ցաւոտ կողմեր ունի։ Այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ գաւառում կանգնած են երկու մեծ հակադիր դասակարգեր — հզօրներ և թոյլեր, ճնշողներ և ճնշուողներ, հարստահարողներ և հարստահարուողներ։ Հզօրները, իշխողները թէև գիւղացիութեան փոքր, ամենաչնչին տոկոսն են կազմում, բայց նրանք իրենց ձեռքում կենտրոնացրել են գիւղերի հարստութիւնը ու քաղաքական զօրութիւնը և շնորհիւ իրենց ուժեղ կազմակերպութեան անդադար ճնշում, հարստահարում և կեղեքում են թոյլերին, անզօրներին. նրանք միշտ օգտւում են խեղճ աշխատաւոր գիւղացիների դաշտերով, այգիներով, արտերով, դրանց համարում են իբր իրենց սեփականութիւն, վարում են՝ իբրև ճորտերի և անխնայօրէն անարգում, ստրկացնում ու բիրտ բռունցքով, մտրակով, մահակով հարուածներ տեղում նրանց յոգնած թիկունքներին։ Աւելին։ Կալանաւորում, բանտարկում և յաճախ ծեծում են խեղճերին անասունների նման։ Խեղճերը դժբախտ հանգամանքների դէմ մաքառելու և նրանց յաղթելու ոյժ չունեն, որովհետև նախ՝ անտէր են, երկրորդ՝ համախմբւելու, կազմակերպւելու, բողոքելու և իրենց պահանջները ներկայացնելու տեսակէտից նրանք ամենաանպաստ պայմանների մէջ են դրուած։ Բռնակալ իշխողները, նրանց ամեն մի քայլին, ամեն մի շարժումին, նրանց գործունէութեան վրայ աչալուրջ հսկում և ամեն ինչ խեղդում են իրենց սաղմին մէջ։ Ահա այդ է գլխաւոր պատճառը սիրելիս, որ չկայ նրանց մէջ դասակարգային կազմակերպութիւն, որ եղբայրօրէն ձեռք մեկնէին միմեանց և համերաշխ կերպով պաշտպանէին իրենց իրաւունքներն ու շահերն անխիղճ հարստահարողներից, հետևապէս նրանք անդադար վճարում են, կաշառում, հիւրասիրում, քծնում և լուռ ու մունջ քարշ են տալիս իրենց կեանքը հառաչելով, տնքալով և իրենց վիշտն ու ցաւը աչցունքով քամում։